ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР

№ 1, 1943

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՂԲԱՏԱՑՈՒ «ՎԱՍՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՒ ՍԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԻ»

Հին հայոց տիեզերագիտական (և աստղաբաշխական) գրականության սյուներն են, ինչպես հայտնի է, երեք խոշոր գիտնականներ՝ Անանիա Շիրակացին VII դարում, Հովհաննես Սարկավագ Վարդապետ Հաղբատացին (ծագումով Գանձակեցին) XII դարի առաջին կեսում և Հովհաննես Երզընկացին կամ Ծործորեցին, Պլուզ մականվանյալը, XIII—XIV դարում։ Սրանցից երկրորդը՝ Հովհաննես Սարկավագը, ինչպես արդեն նշել էինք[1], մի տեսակ կամուրջ է Անանիա Շիրակացուց[2] դեպի Հովհաննես Երզընկացի[3]։

Հովհաննես Սարկավագ Վարդապետի տիեզերագիտական-օդերևութաբանական գրվածքը մեզ հասել է երկու խմբագրությամբ. մեկը ընդարձակ և հիմնականը, որ, ըստ մեր բաժանման, 4 գլխից և փոքր վերջաբանից է բաղկացած, և մյուսը՝ համառոտ, որ, նույնպես ըստ մեր դասավորման, 3 գլուխ է պարունակում։ Վերջինս, անկասկած, ընդարձակից է բխում և ոչ ընդհակառակը՝ ընդարձակը համառոտից։

Ընդարձակ խմբագրության մի օրինակը գտնվում է Երուսաղեմի Հակոբյանց մատենադարանի № 1212 ձեռագիր ժողովածուում, գրված 739=1290 թվին (էջ 376 ա — 380 բ), առանց վերնագրի[4], մյուսը հայտնի է Վե-

---

[1] Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետ Հայոց հիւսիսային կողմանց» etc., վրացերեն, Թբիլիսի 1928, էջ 149—150. Նույնի. Հայոց հին գրականության պատմությունը, վրացերեն, Թբիլիսի 1941, էջ 69, 118, 151—152.

[2] Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից. ի լոյս էած Ք. Պ[ատկանեան] ՍՊԲ 1877, էջ 34—67. Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն և տոմար, աշխատությամբ Աշ. Աբրահամյանի, Երևան 1940, էջ 1—93.

[3] Վիպասանութիւն գերկնային մարմնոց շարժմանէ, գլուսաւորացն՝ որ ի նմա և չհաստատութենէ երկրի. Տեսակ համառոտ և լի իմաստնախոհ բանիւք արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի. Նոր-Նախիջևան 1792, էջ 1—20 = Космографический трактат Иоанна Цорцореци (XIII в.), — Переводы и статьи Н. О. Эмина по духовной литературе (за 1852—1882 г. г.). Москва 1897, стр. 256 (268)—284.

[4] Գ. Զ[արպհանալեան], Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԴ դար), բ. տպ., Վենետիկ 1897, էջ 615, ծանոթ. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետ Հայոց հիւսիսային կողմանց», 137. Նույնի. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Երևան 1934, էջ 222—223 (ուր ձեռագրի համարը մենք սխալմամբ նշել էինք 1272, փոխանակ 1212)։ Հմմ. Եր[ուանդ] Ս. [Տէր-Մինասեան], Հաղբատ և Սանահին վանքերը (967—1300). — «Արարատ», 1901, էջ 341. Գարեգին եպ. [Յովսէփեան], Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցւոյ, — «Արարատ», 1917, էջ 744.

նետկի Մխիթարյանց մատենադարանի ձեռագրերից մեկում, որ «Վասն շարժման և սասանութեան երկրի» վերնագիրն է կրում[1] և որի սկիզբն ու վերջը բառացի համընկնում է Երուսաղեմի ձեռագրին։

Համառոտ խմբագրության զույգ օրինակները հասել են մեզ Վիեննայի Մխիթարյանց մատենադարանի առնվազն 2 ձեռագրում. մեկը՝ № 324 (հավաքածու) 1305 թ. գրված (էջ 157 բ և այլն), մյուսը՝ № 442 (հատակոտորք), որ գրության տարեթիվ չունի (էջ 5 ա և այլն)։ Երկուսի մեջ էլ Սարկավագի գրվածքը զետեղված է հետևյալ վերնագրով. «Վասն շարժման երկրի ասացեալ Սարկաւագ վարդապետին»[2]։

Մինչդեռ առաջին խմբագրությունը ցարդ հրատարակված չէ, երկրորդը լույս ընծայվեց 1925 (1926) թվին Համազասպ վ. Ոսկյանի աշխատությամբ[3]։

Երկու խմբագրությունների միջև տարբերությունն այն է, որ ընդարձակի I և III գլուխները (ըստ մեր բաժանման) համառոտ խմբագրության մեջ բացակայում են. IV գլուխը գնում է I գլխի տեղ, իսկ II գլուխը՝ II գլխի տեղ։ այսինքն՝ իր տեղումն է. այսպիսով, համառոտի մեջ նյութը ետ ու առաջ է դասավորված։ Բացի դրանից, համառոտ խմբագրության մեջ բացակայում է ընդարձակի կարճ վերջաբանը, իսկ սրա փոխարեն ավելացրած է նոր նյութ, որը մենք III գլխի տակ ենք դնում և որը զուտ դավանաբանական բնույթ է կրում։

Հովհաննես Սարկավագի երկն ստորև մենք հրատարակում ենք զույգ խմբագրությամբ, որոնցից ընդարձակը՝ ըստ Երուսաղեմի ձեռագրից մեզ ուղարկված պատճենի, ուր անկյունավոր փակագծերի մեջ դրած վերնագիր-բաժանումները մերն են. ընդարձակ տեքստի ձախ կողմում նշած թվերը ցույց են տալիս № 1212 ձեռագրի էջերը։ Համառոտ խմբագրությունը վերահրատարակում ենք համաձայն Համազասպ վ. Ոսկյանի պուբլիկացիայի կողքից նշելով վերջինիս էջերը։

* * *

Հովհաննես Սարկավագ Վարդապետի տիեզերագիտական-օդերևութաբանական գրվածքի հրատարակությունը կարևոր է և նշանակալից շատ տեսակետներից։

Նախ՝ ինչպես ընդարձակ խմբագրության սկզբնական մասից երևում է, այն գրված է ի պատասխան ոմն վրաց եպիսկոպոսի (անունը չի հիշված), որ խնդրել է մեկնաբանել Սաղմոսի LXX 13—14 տուները։ Եվ այս հանգամանքը դրդում է մեզ վերհիշել այն, թե որքան մեծ դիրք, հռչակ և հեղինակություն ուներ վաստակած վրաց հասարակության և մասնավորապես Վրաստանի արքունիքում Հովհաննես Սարկավագը Դավիթ II Շինող Թագավորի օրոք (1089—1125)։

---

[1] Գ. Զարբհանալեան, op. cit., loc. cit.

[2] Յակոբոս վ. Տաշեան, *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց Մատենադարանին ի Վիեննա*, Վիեննա 1895, էջ 770, 910։

[3] Դկտր. հ. Համազասպ Ոսկեան, *Յովհաննէս Սարկաւագի գրութիւնները*,—«Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 242—243։ Նույնի, *Մատենագրական քննութիւններ* [«Ազգային Մատենադարան» ձԺԲ], Վիեննա 1926, էջ 53—55. Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց*, 149։

Փարթլիս-ցիովրիերայի (Վրաց տարեգրութեան) հին հայերեն թարգմանության մեջ, որ կատարվել է XII դարում, վերջաբանում հետևյալն է ասված Դավիթ Շինողի և Հովհաննես Սարկավագի փոխհարաբերության մասին. «Այլ ինքն (Դավիթ) միրէր զազգն Հայոց և զեկեղեցիսն և զոմն հռետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկավագ անուն, խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական զլուխն՝ աւրհնէր ի նմանէ, և նստէր ընդ նմա և փարէր զպարանոցսն նորա և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց զնա յինէն, զի մի աշխատ լիցիս, եւ թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուականս, եւ պարգևեաց նմա զեաւզ առընթեր վանացն ի ծառայութիւն նմա, եւ ի յաւրհնելն զթագաւորն զայս ասէր, եղեալ զձեռս ի վերայ գլխոյն. «զտի զԴաւիթ ծառայ իմ և եւզով սրբով իմով աւծի զնա»՝ մինչև զտաններորդ տունն, եւ զուարճանայր արքայն և զովէր զեղեցկակերպ թարգմանութիւնն Հայոց»։

Նույն իմաստով սրա մասին վկայում են և հայ պատմիչներ Կիրակոս Դանձակեցին և Վարդանը։ Կիրակոսը գրում է. «Կարի յոյժ սիրէր զսա (զՅովհաննէս Սարկաւագ) թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի է Գէորգեայ, այնքան զի մինչ լսէր զդալուստն նորա, յոտն առնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն. և նա եդեալ զձեռն ի վերայ նորա, և ասէր զսաղմոս այս. «Զտի զԴաւիթ ծառայ իմ», «Զեռն իմ ընկաց», «Մի մեղիցէ նմա թշն», և ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց»[2]։ Ըստ Վարդանի. «և ոչ էր նա (Դաւիթ) երկմիտ յեկեղեցւոյ և յազօթից մերոց. վասն որոյ բազում անգամ զնէր զգլուխ իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»[3]։

Փարթլիս-ցիովրիերայի (Վրաց տարեգրութեան) հայերեն թարգմանության վերջաբանում նշած փաստը, որ Դավիթ Շինողը «պարգևեաց նմա (Յովհաննէս Սարկաւագի) զեաւզ առընթեր վանացն ի ծառայութիւն նմա», միանգամայն հաստատվում է Հաղբատի ս. Նշան տաճարի մուտքի վերևից փորագրված արձանագրությամբ (1123—1125 թ. թ.) ուր, ի միջի այլոց, ասված է. «Դավիթ... տիրեաց զաւառս և ազինս,... եղև խնամող Հաղբատայ և Սանահնի... ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածապաշտութեամբ... զՀաղբատս ի մթութենէ աւերութեանն ազատեաց, գրով և վճռով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայդիս,... զդեղն... և ամենայն հողով և վիճակովն... զեղեալ կալուածս ամենայն վերահաստատեաց»։

[1] Համառօտ Պատմութիւն Վրաց, Վենետիկ 1884, էջ 122—123, մանավանդ Լ. Մելիքսեթ-Բեկ. Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 134—135. հմմ. Նույնի, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 219.

[2] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Դանձակեցւոյ, 1909 թ., էջ 120.

[3] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի յուսարանալ, Վենետիկ 1862, էջ 120.

[4] Description de monasteres arminiens d'Haghbat et de Sanahin, par archim Jean de Crimee, avec notes et appendice, par M. Brosset. Описание монастырей Ахпатского и Сапанского архим. Иоанна Крымского [«Memoires de l'Acad. des Sciences» VII ser., t. VI, № 6], Сп6. 1863 p. Վ=Մեսրոպ բէգ Թրգնկեան, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աւխարհանշակ վանից, Վաղարշապատ 1886, էջ 32. Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, ՍՊԲ. 1913, էջ 28, հմմ. А Ерицов, Ахпатский монастырь,—«Кавказская Старина» № 2, 1872 г., стр. 51, Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 136—137, հմմ. 34. Նույնի, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 223.

Վերջապես, Դավիթ Շինողի պատմիչը (XII դ.), խոսելով 1123—1125 թվերի միջոցին Թբիլիսիում դումարած հայ-վրացական եկեղեցական ժողովի մասին, նշում է, որ ժողովին հայերի կողմից ներկա էին «բազմաթիվ եպիսկոպոսներ և վանքերի առաջնորդները, որոնք պարծենում էին նրանով, թե ինչպես հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[1], Եվ այս եպիսկոպոսների ու վանքերի առաջնորդների շարքում առաջնակարգ, եթե ոչ գեկավար դեր էր խաղում Հովհաննես Սարկավագը։

* * *

Հովհաննես Սարկավագ Վարդապետի տիեզերագիտական-աղերեությաբանական գրվածքը, որ հորինած է Դավիթ Շինողի օրոք, զուգընթաց նրա՝ Սարկավագի՝ «լծակից» (ըստ Վարդանի) Ալավկա որդի Դավթի «դիւրահաս» կանոնների, արժեքավոր նյութ է պարունակում XII դարու ժողովրդական հավատալիքներն ու սնոտիապաշտությունը պատկերելու համար, որի դեմ պայքարում է Հովհաննես Սարկավագը։

Խոսելով վիշապի մասին և առաջ բերելով Աստվածաշնչից վիշապի մասին եղած բոլոր վկայությունները (Սաղմոս LXXIII, 13—14. Մարգարէութիւն Հոզեանի, II, 1—2), Սարկավագը, ի միջի այլոց, տալիս է ժամանակին վայել գիտական մեկնաբանությունը տվյալ հարցի շուրջը։ Ըստ Սարկավագի՝ վիշապը ոչ թե մետաֆիզիկ առարկա է, այլ միևնույն կոկորդիլոսը (Սաղմոս LXXIII, 13—14), կետը (Մարգար. Հոզեանի, II, 1—2) և վերջապես պտուտահողմ, բոլորպան, քաշքամի, մրրկաւոյն, մրրիկ մեծ [=ռուս. смерч] (Մարգ. Հոզե., I, 4, 12), Հեղինակը, քննության ենթարկելով վրաց եպիսկոպոսի «հարցումն... վասն գեղջկաց տգիտաց վիշապին անուանելոց», փորձում է տալ գիտական բացատրություն, որ այդ վիշապը ոչ այլ ինչ է, բայց եթե «հողմ ինչ... պտուտկեալ պատեալ գմիմեամբք լցեալ հողմով յերկրէ»։ Միաժամանակ Սարկավագը նախազգուշացնում է հարցասեր եպիսկոպոսին. «Առասպելական ստութեան ունգն դնել և հաւատալ մի երբէք յանձն առնուցուս վիշապ գնա անուանողաց, քանզի յիմարաց են այդպիսի կարծիք, որպէս և որք վասն լուսնոյ խաւարման աղճատին ի տիտանայ վիշապի դատարկարանելով»։

[1] Հմմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 64, 138, Նույնի, Վրաց աղբյուրները, I, 219, Նույնի Դիտողություններ Շոթա Ռուսթավելու և նրա «Վագրենավորը» պոեմի մասին,—«ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական մասնաճյուղի Տեղեկագիր», 1941 թ. № 1, էջ 77. Նույնի, Հայ-վրացական գրական կապերը,—«Գրական թերթ», 1941 թ. № 5.

[2] Կ. Կոստանեանց, Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի,—«Ազգագրական Հանդէս» XIV, 1906, էջ 105—132, XV, 1907, էջ 62—67. Н. Марр, Известия Акад. Наук 1920, стр. 98. Հմմ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 165—169, Նույնի, Հայոց հին գրականության պատմությունը, 120.

[3] Manuk Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig 1899, S. 24, 43, 68, 74, 79, 83. Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները etc. Վաղարշապատ 1901, էջ 155, 373, Նույնի, «Վիշապներ» կոչված կոթողներն իրրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան 1941, էջ 28, 69, Н. Марр и Я. Смирнов, Витапы, Ленгр. 1931, стр. 66 (=N. Marr et J. Smirnov, Les vichaps, Lngr. 1931, p. 68). Б. Б. Пиотровский, Витапы, Ленгр. 1939, стр. 27. Հմմ. Le Questionnaire de Saint Gregoire l'Illuminateur et ses rapports avec Eznik, par N. Adonz,—Extrait de la Revue de l'Orient Chretien, se Serie, t. V (XXV) № 3 et 4 (1925—1926), Paris 1927, pp. 312, 321—322, 327—328 (329, 336—337, 340—341). Ն. Ադոնց, Eznikiana, Փարիս 1928, էջ 19—21, 53—59.

* * *

[Վասն շարժման և սասանութեան Երկրի]

Վասն շարժման ասացեալ Սարկաւագ վարդապետին

[1]

376 ա Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի
Հայոց վարդապետէ Սարկաւագէն՝ գիր
գոլով յաղագս ամենայն եթէ զիա՞րդ ու-
Սաղմ. LXXIII, նի երգ սաղմոսին ասացեալ. «Դու խոր-
14 տակեցեր զգլուխ վիշապաց ի վերա
ջուրց. Դու փշրեցեր զգլուխ վիշապին
և ետուր զնա կերակուր զաւրացն հնդ-
կաց»։ Ի դիմաց զերելոց ժողովրդեանն
ի տարեկան մատուցանէ զողբերգական
պաղատանս Դաւիթ Ասափաւ հանդերձ
376 բ և այլովք երգակցաւք [. «Ընդէ՞ր մեր-
Սաղմ. LXXIII, ժեցեր, աստուած, ի սպառ. բարկացաւ
1 սրտմտութիւն քո ի վերա ժողովրդեան
քո»։ Եւ ի կարգ արկեալ մի ըստ միո-
ջէ զանցսղ ծնդակ կրեցն, որ ի Քաղ-
դէացւոցն զաւերակ քաղաքին Երու-
սաղէմի. և զի ելեան ազգին զերու-
թիւն, զկիզումն տաճարին և զի խոր-
հեցան լռեցուցանել զամենայն տաւնս
Երուսաղեմայ։ Եւ ապա ի վրէժխնդ-
րութիւն կոչելով զաստուած, ասէ.«Մին-
չև յերբ աստուած նախատէ թշնամին,
բարկացուցանէ հակառակորդն զանուն
սուրբ քո»։ Յուշ առնէ և զառաջին
սքանչելեացն վասն ազատութեան Ե-
րուսաղէմի, վիշապս անուանէ զնախա-
Սաղմ. րարս. իսկ վիշապ... զինքն իսկ զխո-
LXXIII, վին։ Այլ զի ասէ. «Եթէ ետուր զնա ի
14
377 ա կերակուր զաւրացն Հնդկաց»։ Այս հըն-
դիկք, զրացիք Եգիպտոսի, եկին ի բուն
Հնդկաց, որ յարեելս հարաւոյ առ
Հնդես գետով ասեն. և այնքան զաւ-
րացան ի պանդխտութենէն, որ և բա-
զում անգամ տիրէին Եգիպտացւոց և
թագաւոր ի վերա նոցա յինքեանց կա-
ցուցանէին։ Եւ յորժամ կորեաւ փա՞-
րաւոն իւրովքն առ հասարակ, եւ առա-
ւել բաջալերեցան առնուլ յաւարի զազ-
գըն Եգիպտացւոց և ծառայեցուցանել
զնոսա, վասն որոյ ի կերակուր տալ
ասէ զվիշապն փարաւոն զաւրացն Ե-
գիպտացւոց՝ զողջոյն ժողովուրդ ժա-
ռանգութեան նորա յանուն նորա կո-
չելով. քանզի յուտճահալ ի յափշտա-
կելն և ծառայեցուցանել, որպէս և ասէ
իսկ աստուած բերանով սուրբ մարգա-
րէին վասն իւրոյ ժառանգութեան Իս-
րայելի կոչեցելոյ յԱսորեստանեայցն [
377 բ վշտացելոց, որ կուռէին զժողովուրդ

իմ որպէս կերակուր՝ զայն ակնարկե-
լով։

[II]

Այլ միւս եւ հարցումն ձեր վասն
զեղջկաց ազգաց վիշապին անուանո-
ղաց. ոչ ունին դժուարինս և տարա-
կուսելի ինչ. քանզի ոչ եթէ վիշապ է
փոշին մանուածոց ի փոթորկէ գետնա-
կանէ յաւդս խաղացելոց, այլ հողմ
ինչ է պտուտկեալ՝ պատեալ զմիմեամբք
լցեալ հողմով յերկրէ, զի յորժամ դէմ
ընդ դէմ միմեանց փչիցեն և հանդէպ
գտանիցին, առ ի չզրկելոյ շրջան ինն
առնուն ի միասին գնալով պատմամբ
զիրեարս. և քանզի ոչ զատանին և ոչ
խոտորին ի միմեանց, մինչև ի բարձ-
378 ա րութիւն աւդոյդ վերնոյ, այնպէս | ե-
րեւին. և լինի այս երբեմն բուռն և
սաստիկ զաւրութեամբ. իսկ երբեմն
հանդարտագոյն և նուազ. առասպելա-
կան ստութեան ունգն դնել և հաւա-
տալ մի երբէք յանձն առնուցուս վի-
շապ զնա անուանողաց, քանզի յիմա-
րաց են այդպիսի կարծիք. որպէս և
որք վասն լուսնոյ խաւարման աղճա-
տին ի տիտանոյ վիշապի զատարկա-
բանելով։

[III]

Այլ վասն որ ի Յոբ վիշապին էիր
հարցեալ, բազում ունի տեսութիւն
բանն, որ ոչ է այժմու ձեռնարկու-
թեանս. Սակայն փոքր ինչ և մանա-
ւանդ զխնդրելին ձեզ ծանուցուք հա-
մառաւտ բանիւ. Նա է սկիզբն արա-
րածոց տեառն, ասաց որ խաւսեցան ընդ
Յոբ յամպոց և ի մրրկի. Ոչ ամենայն
արարածոց, այլ որ ի ջուրս բու ածին.
Քանզի Մովսէս զերկիրն առաջի գրէ
378 բ արարածոց ամենայն | ի սկիզբն. և է
յաղթ կենդանին մարմնով և աննհարին
մեծութեամբ, թագաւոր որոտի չարաց,
բստ որում և գրեալն իսկ է. զոր և
Ռովմ. անուանին Լեւիաթան ժողովք իմաստ-
Ռովմ. XI, 10 [ն]ոց, քանզի որպէս է Բեհ[ե]մովդ ցա-
մաքին սողնոց կենդանեաց թագաւոր,
և գազանաց առօծ. այսպէս և Գրայի՛ն
արարածոց շրջան, որոց Լևիաթան
միւս առանց յծորդի ընդերութեան ոչ
ծնեալ յումեքէ, վասն զի առաջին յա-
րարածս ստուծոյ զաւղական կենդա-
նիս և ոչ ծնեալ զոր յինքենէ. քանզի

[II]

54 Այլ միւս եւ ձեր հարցումն վասն
զեղջկաց ազգաց վիշապին անուանե-
լոյ. ոչ ունին դժուարինս և տարակու-
սելի ինչ, քանզի ոչ եթէ վիշապ է փո-
շին մանուածոյ ի փոթորկէ գետնա-
կանէ յօդս խաղացելոյ. այլ հողմն ինչ
է պտուտկեալ՝ պատեալ զմիմեամբք
լցեալ հողմով երկրէ, զի յորժամ դէմ
ընդ դէմ միմեանց փչեսցին և հան-
դէպ գտանիցին. առ ի չզրկելոյ մի-
այն զմիւս և ոչ յաղթահարելոյ շրջան
ինն առնուն ի միասին գնալով պատ-
մամբ զիրերօք և քանզի ոչ զատին և
ոչ խոտորին ի միմեանց մինչև ի բարձ-
րութիւն օդոյդ վերնոյ այսպէս երեւին
և լինի այս երբեմն բուռն և սաստիկ
զօրութեամբ, իսկ երբեմն հանդարտա-
գոյն և նուազ. առասպելականն ստու-
թեան ունկն դնել և հաւատալ մի եր-
բեք յանձն առնուցուս վիշապ զնա
56 անուանողաց. քանզի յի|մարաց են
այսպիսի կարծիք. որպէս և որք վասն
լուսնոյ խաւարման աղճատին ի տրա-
նոյ վիշապին զատարկաբանելով։

ոչ տուեալ նմա սիրել անձամբ ձեռն
ծնընդեան։ Մահ է պատճառ ածականա-
ցի ծննդեան, զի մի ապականեսցին
սերք և տեսակք կենդանեաց, այլ փո-
խանորդութեամբ մնասցէ ամենայն ա-
ռանց եղծման և ապականութեան ի
պակասութենէ նմա. վասն զի ոչ մե-
379 ա ռանի, ոչ էլ հրամայեցաւ ծնընդա | գոր-
ծութեամբ յառաջխաղացութեամբն. և
ունի գործ զարգելումն ջուրց ներքին
և անդրնդոց, քան զյատակս վերին ծո-
վու, քանզի զահագին ծանրութիւն մե-
ծութեան իւրոյ մարմնոյն կեցուցեալ
ունի ի վերա սառցկարկող հոսանաց
յորդութեան ջուրցն, այնքան միայն
թոյլ տալով ջուրցն ելանեան, որքան
հեշտ և դիւրին որովայնի մարմնոյն
իւրոյ թուեսցի և իցէ։ Եւ այս գործ
մեծի նախախնամութեան աստուծոյ, զի
թիծու (?) վասցի ծածկութեամբ ջուրց
երկիրս ցամաք, որպէս ի սկիզբն. ոչ
եթէ զի զանդընդային բղխմունս նոր
ստեղծ զամենայն յոչնչէ և զեղեցկա-
պէս նախախնամէ, ոչ կարէր այլովք
արգելուլ կամ խափանել, զի մի ընաւ
իսկ լինիցի. այլ որպէսզի զիւրոյ ան-
չափական զաւրութեան և զիմաստու-
379 բ թեան | հանդէս ցուցցի. ըստ որում ե-
Յովն. 1, 15 տես Յունան յանդուն[դ]սն կառավա-
րելով, և երկիցէն ի նմանէ ամենայն
ազգք. այնպէս կամեցաւ մատակարա-
րել. բայց բազում ինչ ի բանից պատ-
մութենէն զնմանէ այլաբան արարեալ
լինի ի վերա իմանալոյ վիշապին կա-
մակորի. և այդ յաղագս զորին բաւա-
կանացի։

[IV]

Իսկ վասն շարժմանց, թէ ուստի լի-
նին, է պատճառ այսոցիկ բ[ռ]նութիւն
հողմոց անդրնդայնոց. քանզի երակք
ընդարձակք են զնացից հողմոց երկրի,
որպէս և ջրոյ ընթանալոյ. վասն զի
ըստ որում ի վերա ծովու հիմունս է-
արկ բարձրեալն երկրի և ի վերա գե-
տոց պատրաստեաց զնա, այնպէս և ի
վերա հողմոց զծանրութիւն սորա կա-
ցոյց ամենահնարապէս և կարողարար,
380 ա Իսկ յորժամ թիա | եսցին շունչք հող-
մոյն յընտանի և [ի բն]ական ճանա-
պարհացն ըստ իրիք պատահման յաղխս
և ի փապարս ստոր երկրոյս, հարկ լի-
նի սասանել երկրի մինչև ուղ[ղ]եսցին
զնացք շնչմանցն հողմոց. այլ երբեմն

[I]

53 Իսկ վասն շարժմանց՝ թէ ուստի լի-
նին, է պատճառ այսոցիկ բռնութիւն
հողմոց անդնդայնոց, քանզի երակք
ընդարձակք են զնացից հողմոյ երկրի,
որպէս և ջրոյ ընթանալոյ, վասն զի
ըստ որում ի վերայ ծովու հիմունս է-
արկ բարձրեալն երկրի և ի վերայ գե-
տոց պատրաստեաց զնա, այսպէս և ի
վերայ հողմոց զծանրութիւն բարձրա-
ցոյց ամենահնարապէս և կարողարար.
իսկ յորժամ թիւրեսցեն շունչք հող-
մոցն յընտանի (var. ընդանի) և ի
բնաւոր ճանապարհացն ըստ իրիք պա-
տաղման յաղխսն և ի փապարս ստոր-
երկրեայս, հարկ լինի երկրի սասանել
երկրի, մինչև ուղղեսցին զնացք շընչ-

սաստկագոյն լինի շարժումն ըստ բռնութեան հողմոցն և կործանական, իսկ երբեմն համարձակագոյն վասն կակղութեան ընչմանն յուզիցն ընթանալո և քարեկարգապէս ոչինչ փասի երկիր, բայց խոտորումն գնացիցն և առաւելութիւն բռնութեան դղրդումն երկրի գործ է. է երբէք, զի թարթափէ միայն. և է, զի մռնչումն և եթ գործ է, զոր մռնչողական կոչեն, և անու[ս]րութեան պատահիլ երկրի՝ պատառի, ջուր կամ հուր կամ վէմս ի վեր ձգեալ ընկենու. և այլ երբէք գոչիւն միայն լսեցուցանէ։ Իսկ արարիչն ամենայնի յորժամ
380 բ կամեցի ներել մեզ | բնաւորական խրովք բաղցրութեամբ, սանձահոծեալ ըն[դ]դըկէ զրոնութիւն և անսեալ յանդարձութեան զազգս մարդկան և չշահեալ ինչ յերկայնմտութենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէսզի և զայլս ի վերա [երկրի] ի պատուհասս. և եթէ ընդէ՞ր բարիք ընդ չարս մեռանին և անմեղք ընդ մեղաւորս, ի բանէ անտի ուսցիս, զոր արա՛րեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արեմտեայ Յարժմանն.

[.•.]

Եւ զայդ բաւական համարեալ, թող զերկայնմտութիւն բնախօսութեան.

մանցն հողմոց. այլ սաստկագոյն լինի շարժումն ըստ բռնութեան հողմոցն և կործանական իսկ երբեմն հանդարտագոյն վասն կակղութեան ընչմանն, յուցիցն ընթանալոյ և քարեկարգապէս ոչինչ փասի երկիր, բայց խոտորումն գնացիցն և առաւելութիւն բռնութեան դղրդումն երկրի գործէ, զոր մռնչողա-
54 կան կոչեն և անօսրութեան | պատահել երկրի պատառէ, ջուր կամ հուր կամ վէմ ի վեր ձգեալ ընկենու. և այլ երբեք գոչիւն միայն լսեցուցանէ։ Իսկ արարիչն ամենայնի յորժամ կամեցի ներել մեզ բնաւորական խրովք բաղցրագթութեամբ սանձակոծեալ ընդդըկէ զրոնութիւնն և տեսեալ յանդարձութեան զազգս մարդկան և չշահեալ ինչ յերկայնմտութենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէս և զայլսն ի վերայ երկրի պատուհաս և թէ ընդէ՞ր բարիքն ի չարս մեռանին և անմեղքն ի բանէ անտի ուսցին, զոր արարեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արեմտեայ շարժմանն։

[III]

55 Աստուած մարդասէր, մարդ աստուածասէր, որ մարդ է և աստուած։ Ոչ ումեր երեւի աստուած ի զգայեացս, բայց միայն մարդոց. վասն մարդոյ աստուած ի մարդ շրջեալ կերպա[րա]նայ. մի ազգակցութիւն աստուծոյ և մարդոյ, ցանկալի է աստուծոյ մարդ և աստուած մարդոյ, քանզի ցանկութիւն ոչ յումեք է՝ բայց միայն յաստուած և ի մարդ։ Զերկիր գործեն մարգիկք. զերկին զարդարեն աստեղք։ Ամենայն մարդ մարմին և անձն ունի, այլ ոչ ամենայն անձն միտս ունի. ուրանոր միտք, անդանոր լոյս. և ուրանոր լոյս, անդանոր միտք. քանզի միտք լոյս և լոյս միտք։ Աստ գլուսաւոր մտաց և զիմաստնոց ասէ։

Проф. Л. М. МЕЛИКСЕТ-БЕК

Трактат Иоанна Саркавага Вардапета Ахпатского „О движении и колебании земли“

(Резюме)

Столпами древнеармянской космологической (и астрологической) литературы являются крупные ученые—в VII веке Ананий Ширакский, в первой половине XII века Иоанн Саркаваг Вардапет Ахпатский (сконч. в 1129 г.) и на рубеже XIII—XIV в в. Иоанн Ерзинкаец, или Цорцорец, по прозвищу Плуз.

Иоанн Саркаваг, современник грузинского царя Давида II Строителя (1089—1125), принимал деятельное участие в обсуждении вопросов как общественно-политических (об объединении армянской и грузинской церквей), так и чисто научных. Историк Давида Строителя пишет, что армянские церковные деятели, принимавшие участие в армяно-грузинском церковном соборе, 1123—1125 г. г., гордились тем, что „достигли вершины всякого просвещения и учености“.

Иоанн Саркаваг Вардапет Ахпатский (по происхождению из Гандзака) известен в армянской литературе своей разносторонней деятельностью как богослов-догматик, экзегет, философ, космолог-астролог, реформатор календаря, историк и поэт, в связи с чем он наделен прозвищами великого учителя (вардапета, рабунапета), философа, софиста, пиитикоса, ритора и пр. Из массы его писаний особого внимания заслуживает трактат космолого-метеорологического содержания „О движении и колебании земли“, дошедший до нас в 2-х редакциях: 1) *пространной*, предлежащей в рукописях—одной в Собрании Иерусалимского арм. патриаршего монастыря св. Якова (№ 1212—от 1290 г.), и другой—в Собрании Венецианских мхитаристов; и 2) *краткой*, дошедшей до нас в манускриптах собрания Венских мхитаристов, № № 324 и 442, по которым таковая редакция издана Амазаспом Воскяном в Вене в 1925 (1926) году.

Имея в виду, что пространная редакция названного трактата Саркавага до сих пор еще не опубликована, притом она заметно отличается от краткой, и располагая копией с таковой (присланной нам из Иерусалима, вместе с другими материалами несколько лет тому назад), мы и публикуем ее, привлекая при этом для сравнения наличное издание А. Воскяна, воспроизводимое en regard.

Трактат Саркавага в пространной редакции, являющейся *первичной* и *основной*, написан по запросу грузинского епископа (имя не указывается), современника его, и дает научное (для того времени) объяснение явлений природы, в частности определение понятий *вишап*, *левиафан*, *бегемот* и пр., а также таких «игр» природы, как *смерч*, которые

автором представляются в реальном свете, но не в восприятии суеверных народных масс с его верованиями и предрассудками, от которых автор считает нужным всячески оградить грузинского епископа. При этом дается естественное объяснение причины затмения луны, вопреки народному представлению, связывавшему таковое с появлением „титана-вишапа“.